

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հունիսի 12-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ խաղաղականի ժամերգություն, որին ներկա էին ավելի քան 200 հայ հավատացյալներ:

Ժամերգության ավարտին Վեհափառ Հայրապետը ողջունեց ներկաներին և համառոտակի խոսեց Ֆրանսիա կատարած Իր ուղևորության տպավորությունների մասին: